POLICYOBSERVER

NCPPR

2019թ

# ՀՀ Պետական գործուղումների մոնիտորինգի արդյունքները

/2018-2019թթ 10 ամիսներ/

Երևան

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N19996: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

**Ծրագրի ղեկավար** ՝ Արմենուհի Բուռնազյան

**Ուսումնասիրության իրականացնող** ՝ Աստղիկ Ավչյան

*National Center of Public Policy Research*

*www.policyobserver.am*

*www.facebook.com/PolicyObserver/*

POLICYOBSERVER NCPPR

# Նախաբան

Հայաստանի Հանրապետության պետական գործուղումների օրենսդրական դաշտը կարգավորվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 2-րդ մասով: Սույն մոնիտորինգի նպատակն է վերլուծել ՀՀ պետական գործուղումների կառուցվածքային առանձնահատկությունները և ընդհանուր միտումները: Հրապարակման մեջ ամփոփված են 2018 և 2019 թվականների առաջին 10 ամիսների ընթացքում պետական մարմինների կողմից ավիատոմսերի ձեռքբերման հետ կապված քանակային և արժեքային մոնիտորինգի արդյունքները:

Համաձայն օրենսդրական կարգավորման, գործուղված աշխատողին հատուցվում է օրապահիկը, գիշերավարձը, ճանապարհածախսը, հյուրանոցային ամրագրման վճարը և այլ ծախսեր, հետևաբար գործուղվող անձանց կողմից հնարավոր են գայթակղություններ ավելի երկար գործուղումներ ունենալ հարկատուների հաշվին, ինչը բավականին դժվար բացահայտելի ռիսկ է:

Աղյուսակ1-ում ներկայացված են գործուղումների և շրջագայությունների պլանային և փաստացի ծախսային ցուցանիշները.

Աղյուսակ 1. 2018-2019թթ. 9 ամիսների գործուղումների և շրջագայությունների վրա կատարված ծախսերի շեղումը պլանից

| | Պլանային | | | | Փաստացի | | | | Շեղումը պլանից | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *2018թ 9 ամիս* | | *2019թ 9 ամիս* | | *2018թ 9 ամիս* | | *2019թ 9 ամիս* | | *2018թ 9 ամիս* | *2019թ 9 ամիս* |
| | *մլրդ դրամ* | *%* | *մլրդ դրամ* | *%* | *մլրդ դրամ* | *%* | *մլրդ դրամ* | *%* | *մլրդ դրամ* | *մլրդ դրամ* |
| **Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում, այդ թվում՝** | 117.9 | 100 | 155.1 | 100 | 96.6 | 100 | 113 | 100 | -21.3 | -42.1 |
| **Գործուղումների և շրջագայությունների ծախսեր** | 3.5 | 3.0 | 4.3 | 2.8 | 2.7 | 2.8 | 3.4 | 3.0 | -0.8 | -0.9 |

2018 - 2019 թվականների 9 ամիսներին պետական բյուջեից դուրս է գրվել 6. 1 մլրդ դրամ գործուղումների և շրջագայությունների ծախսերը ֆինանսավորելու ուղղությամբ: Ընդ որում 2018թ 9 ամիսների ֆինանսավորումը կազմել է 2. 7 մլրդ դրամ, որը ողջ ապրանք-ծառայությունների ձեռքբերման ծախսերի մասնաբաժնի 2. 8% է, իսկ հաջորդ տարում, 2019թ. առաջին ինն ամսում ծախսվել է 3. 4մլրդ դրամ՝ 3% մասնաբաժնով:

---

2019թ 9 ամիսների ընթացքում պետական գործուղումներին հատկացվել է 700 միլիոն դրամ ավել նախորդ տարվա համեմատ:

---

Համադրելով պլանային ակնկալիքները իրական ցուցանիշների հետ, նկատում ենք 2019թ-ին 900 միլիոն դրամի փաստացի շեղում, իսկ 2018թ-ին՝ 800 միլիոն:

## Գնված ավիատոմսերի վերաբերյալ արժեքային մոնիտորինգ

Համաձայն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ հրապարակած տվյալների, պետական գործուղումները բնութագրող թե՛ քանակական և թե՛ արժեքային ցուցանիշները 2019թ 10 ամիսների ընթացքում աճել են՝ 2018թ 10 ամիսների համեմատ: Այսպիսով, սույն թվականի 10 ամիսների ընթացքում ձեռք է բերվել 4925 ավիատոմս ընդամենը 1 035 միլիոն դրամ արժողությամբ, իսկ 2018թ նույն ժամանաշրջանում՝ 4543 ավիատոմս, ընդամենը 1 001 միլիոն դրամ արժեքով:

---

Սա նշանակում է, որ արժեքային առումով այս տարի ծախսերն ավելացել են 3. 4%-ով կամ 34 միլիոն դրամով և քանակային առումով՝ 8. 4%-ով կամ 382 ավիատոմսով:

---

Ուսումնասիրել ենք 2018թ-ը և 2019թ-ի առաջին 10 ամիսների ավիատոմսերին ուղղված հատկացումները, և նկատել ենք որ ընդհանուր առմամբ ավիատոմսի ծախսերն ունեն աճման միտում: Նկատելի պիկեր երևում են գարնան, ամռան և աշնան ամիսներին, իսկ առավել նվազ ծախսեր նկատվում են ձմռան ամիսներին:

Գրաֆիկ 1. Ավիատոմսերի ծախսն ըստ ամիսների, մլն դրամ /2018թ հունվար - 2019թ հոկտեմբեր/




Գրաֆիկից երևում է, որ 2019թ որոշ ամիսների ավիատոմսերի ծախսն աճել է, այսպես օրինակ՝ մայիսին 69 միլիոն դրամով, սեպտեմբերին՝ 17միլիոն դրամով, հոկտեմբերին՝ 28 միլիոն դրամով:

Աղյուսակ 2. 2019թ 10 ամիսների ընթացքում ծառայողական գործուղումների ավիատոմսերի ծախսն ըստ պետական կառույցների

| Կառույցի անվանումը | Ընդհանուր գումարը | | Ավիատոմսերի քանակը | | ավիատոմսերի միջին գինը, դրամ |
|---|---|---|---|---|---|
| | մլն դրամ | կշիռն ընդամենը ավիատոմսերում, % | հատ | կշիռն ընդամենը ավիատոմսերում, % | |
| ՀՀ Պաշտպանության նախարարություն | 237.5 | 22.9 | 1350 | 27.4 | 175,926 |
| ՀՀ Արտաքին գործերի նախարարություն | 104.5 | 10.1 | 446 | 9.1 | 234,305 |
| Վարչապետի աշխատակազմ | 42.2 | 4.1 | 166 | 3.4 | 254,217 |
| ՀՀ Ոստիկանություն | 41.5 | 4.0 | 213 | 4.3 | 194,836 |
| Երևանի պետական համալսարան հիմնադրամ | 38.6 | 3.7 | 198 | 4.0 | 194,949 |
| ՀՀ Նախագահի աշխատակազմ | 36 | 3.5 | 113 | 2.3 | 318,584 |
| ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտե | 28.7 | 2.8 | 200 | 4.1 | 143,500 |
| Հայէրոնավիգացիա ՓԲԸ | 27.8 | 2.7 | 114 | 2.3 | 243,860 |
| ՀՀ պետական պահպանության ծառայություն | 18.2 | 1.8 | 79 | 1.6 | 230,380 |
| ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց ՊՈԱԿ | 16.9 | 1.6 | 58 | 1.2 | 291,379 |
| ***Առաջին 10 պետական մարմինների ավիատոմսերի ծախսային հանրագումարը*** | 591.9 | 57.2 | 2937 | 59.6 | 201,532 |
| ***Ընդամենը*** | 1035 | 100.0 | 4925 | 100.0 | 210,152 |

Աղյուսակ 2-ում կարող ենք տեսնել, որ գործուղած կառույցների խոշոր տասնյակը (ընդամենը 158 կառույցների ցանկում) վերահսկում է ավիատոմսերի ծախսի 57%-ը կամ 592 միլիոն դրամ: Այսպես օրինակ առաջին դիրքում Պաշտպանության նախարարությունն է: 2019թ 10 ամսվա ընթացքում ՊՆ-ը ձեռք է բերել 1350 ավիատոմս, որի համար ծախսվել է 238 միլիոն դրամ գումար, ընդ որում՝ միջինում ավիատոմսի միջին արժեքը կազմել է 176 հազար դրամ: Ի դեպ, ՊՆ ավիատոմսերի ծախսերն ավելացել են 71 միլիոն դրամով: Ի տարբերություն 2018 թվականի 10 ամսվա գործուղումների, կառույցների ցանկը գրեթե փոփոխություն չի կրել: Նշենք որոշ նկատելի փոփոխություններ, այսպես օրինակ՝ վարչապետի աշխատակազմի կողմից ձեռք բերած ավիատոմսերի թե քանակը, թե արժեքը կրկնապատկվել են՝ ձեռք բերելով 166 ավիատոմս 42 միլիոն դրամ

արժողությամբ: Կրկնապատկվել է նաև նախագահի աշխատակազմի կողմից ձեռք բերված ավիատոմսերի և քանակը, և արժեքը ու 2019թ ձեռք է բերվել 113 ավիատոմս 36 միլիոն դրամ արժողությամբ:

Աղյուսակ 3. 2018թ 10 ամիսների ընթացքում ծառայողական գործուղումների ավիատոմսերի ծախսն ըստ պետական կառույցների

| Կառույցի անվանումը | Ընդհանուր գումարը | | Ավիատոմսերի քանակը | | ավիատոմսերի միջին գինը, դրամ |
|---|---|---|---|---|---|
| | մլն դրամ | կշիռն ընդամենը ավիատոմսերում, % | հատ | կշիռն ընդամենը ավիատոմսերում, % | |
| ՀՀ Պաշտպանության նախարարություն | 166.4 | 16.6 | 954 | 21.0 | 174,423 |
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 93.3 | 9.3 | 377 | 8.3 | 247,480 |
| Երևանի պետական համալսարան հիմնադրամ | 39.2 | 3.9 | 214 | 4.7 | 183,178 |
| ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտե | 37.4 | 3.7 | 172 | 3.8 | 217,442 |
| Հայաէրոնավիգացիա ՓԲԸ | 30 | 3.0 | 130 | 2.9 | 230,769 |
| ՀՀ Ոստիկանություն | 29.6 | 3.0 | 168 | 3.7 | 176,190 |
| Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ ՊՈԱԿ | 27.9 | 2.8 | 123 | 2.7 | 226,829 |
| Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբ ՊՈԱԿ | 27.3 | 2.7 | 115 | 2.5 | 237,391 |
| ՀՀ վարչապետի աշխատակազմ ՊԿՀ | 24 | 2.4 | 75 | 1.7 | 320,000 |
| ՀՀ Նախագահի աշխատակազմ | 17.2 | 1.7 | 72 | 1.6 | 238,889 |
| ***Առաջին 10 պետական մարմինների ավիատոմսերի ծախսային հանրագումարը*** | 492.3 | 49.2 | 2400 | 52.8 | 205,125 |
| ***Ընդամենը*** | 1001 | 100.0 | 4543 | 100.0 | 220,339 |

Չնայած այն հանգամանքին, որ այս տարվա 10 ամիսների ընթացքում ավիատոմսերի ձեռքբերման համար ավելի մեծ գումար է հատկացվել, մեկ ավիատոմսի միջին գինը նվազել է և եթե նախկինում կազմում էր 220 հազար դրամ, ապա այս տարի ավելի նվազ՝ 210 հազար դրամ:

Նկատել ենք ավիատոմսերի գնման գործարքներ, որոնց գնման գինը ընթացիկ շուկայան գնից ավելի բարձր է: Այսպես օրինակ՝

- Ֆինանսների նախարարի տեղակալ Արմեն Հայրապետյանը ապրիլին գործուղել է դեպի Ֆիջի, և ավիատոմսի համար վճարվել է 4. 3 միլիոն դրամ, այն դեպքում երբ նույն ժամանակահատվածում այդ ուղղությամբ տոմսերի միջին շուկայական գինը կազմում էր 1միլիոն դրամ:
- Հունիսի 10-ին ԱԳՆ-ը գնել է 1 ավիատոմս 1. 5 միլիոն դրամ արժեքով, Նյու Յորք-Ժնև ուղղությամբ, երբ շուկայական գինը սկսվում էր 200 հազար դրամից, այսինքն՝ 7. 5 անգամ ավելի մատչելի:
- ԱԳՆ-ը ձեռք է բերել ավիատոմս Փարիզ-Բոգոտա-Փարիզ ուղղությամբ, հատկացնելով 1. 1 միլիոն դրամ, երբ շուկայական գինը սկսվում է 400 հազար դրամից՝ եռակի անգամ մատչելի:
- Առողջապահության նախարարությունը հունիսի 14-ին ձեռք է բերել Երևան-Սինգապուր և հետադարձ ուղղությամբ մեկ ավիատոմս 1. 1 միլիոն դրամ արժողությամբ, այն դեպքում երբ շուկայական գինը սկսվում է 600 հազար դրամից,
- Հունիսի 21-ին ՊՆ-ը գնել է 1 ավիատոմս Երևան-Ուլան Բատոր և հետադարձ ուղղությամբ ծախսելով 1 միլիոն դրամ, սակայն շուկայական գինը սկսվում է 500 հազար դրամից,
- Դասական երաժշտության աջակցության ՀԿ-ն գնել է 2 ավիատոմս, Ֆրանսիա-Վիեննա-Երևան և հետադարձ ուղղությամբ, յուրաքանչյուրի գինը՝ 819 հազար դրամ, երբ շուկայական գինը սկսում է 200 հազար դրամից,
- Ոստիկանությունը հուլիսի 17-ին գնել է 2 ավիատոմս Երևան-Վիեննա-Երևան ուղղությամբ, յուրաքանչյուրը 763 հազար դրամ արժողությամբ, այն ժամանակ երբ ավիատոմսերի շուկայում այդ ուղղությանը բնորոշ միջին գինը կազմում էր 300 հազար դրամ, իսկ նվազագույնը՝ 200 հազար դրամ:

2018թ նույնպես նկատել ենք նմանատիպ գործարքներ՝

- Նախագահի աշխատակազմի կողմից գնվել են 2 բիզնես կարգի ավիատոմս Երևան-Մոսկվա-Երևան ուղղությամբ, յուրաքանչյուրի արժեքը 919 000 դրամ, երբ նույն ժամանակահատվածում ավիատոմսերի միջին արժեքը կազմում էր 500 000 դրամ:
- Հուլիսի 7-ին Ոստիկանության կողմից ձեռք է բերվել էկոնոմ կարգի 3 ավիատոմս Լիոն-Մոսկվա-Երևան ուղղությամբ՝ յուրաքանչյուրը 575 000 դրամով, մինչդեռ միևնույն ժամանակահատվածում առկա են լինում կրկնակի անգամ մատչելի ավիատոմսեր:

# Կառավարության աշխատակիցների գործուղումների քանակային մոնիտորինգ

Համաձայն Էլեկտրոնային Կառավարման հրապարակած տվյալների, պետական գործուղումների ընդհանուր տևողությունը, 2019թ 10 ամիսների համար, կազմել է 1127 օր: 2018թ առաջին 10 ամիսներին համանման ցուցանիշը կազմել էր 1119 օր:

2019թ 10 ամիսների ընթացքում ծառայողական գործուղումների շրջանակում օրաքանակային տևողությամբ ամենից երկար գործուղված անձինք են՝

- Տաթևիկ Ռևազյան 43 օր
- Հակոբ Վարդանյան 38 օր
- Արսեն Թորոսյան 31 օր
- Էրիկ Գրիգորյան 24 օր
- Արայիկ Հարությունյան 24 օր

Վերը նշված աշխատակիցների գործուղումների միասնական կշիռը կազմում է ողջ գործուղումների կառուցվածքում 14 %: Նույն ժամանակահատվածում մեկ գործուղման միջին տևողությունը կազմել է շուրջ 4 օր (3. 8):

2018թ 10 ամիսների ընթացքում ամենից երկար գործուղած պաշտոնյաներն են՝

- Արարատ Միրզոյան 25 օր
- Մխիթար Հայրապետյան 24 օր
- Արմեն Հայրապետյան 22 օր
- Արտակ Ձեյնալյան 22 օր
- Միքայել Փաշայան 22 օր
- Վաչե Գաբրիելյան 22 օր

Վերը նշված աշխատակիցների գործուղումների միասնական կշիռը կազմում է ողջ գործուղումների կառուցվածքում 12 %: Նույն ժամանակահատվածում մեկ գործուղման միջին տևողությունը կրկին կազմել է շուրջ 4 օր (4. 1):

Գրաֆիկ 2. 2018թ և 2019թ 10 ամիսների գործուղումները /օր/







## Կառավարության մարմինների գործուղումների քանակային մոնիտորինգ

Այնուհետև, փորձել ենք պարզել, թե որ պետական կառույցներն են առավել երկար գործուղել: Ներկայացնում ենք 2019թ 10 ամիսների ամենաերկար տևողությամբ գործուղած մարմինների ցանկը՝

1. **Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝** 101 օր կամ ընդամենը գործուղումների 9 %-ը,
2. **Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝** 93 օր կամ 8%-ը,
3. **Արտակարգ իրավիճակների նախարարություն՝** 75 օր կամ 7%-ը,
4. **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝** 68 օր կամ 6%-ը,
5. **Առողջապահության նախարարություն՝** 66 օր կամ 6%-ը:

Վերը նշված կառույցների գործուղումների միասնական տևողությունը կազմում է ողջ գործուղումների 36%:

2018 թվականի 10 ամիսների ընթացքում ամենից երկար գործուղել են հետևյալ պետական կառույցները՝

1. **Արտակարգ իրավիճակների նախարարություն** ՝ 204 օր, կամ ողջ պետական գործուղումների 18%-ը,
2. **Արդարադատության նախարարություն** ՝ 98 օր կամ 9%,
3. **Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն**՝ 88 օր կամ 8%,
4. **Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն**՝ 73 օր կամ 7%,
5. **Վարչապետի աշխատակազմ՝** 68 օր կամ 6%:

Վերը նշված հինգ կառույցների գործուղումների տևողությունը ընդամենը գործուղումների կառուցվածքում ունի 48% կշիռ:

Գրաֆիկ 3. 2018թ և 2019թ 10 ամիսների գործուղումները /օր/



# Ծառայողական գործուղումների հիմնական ուղղությունները

2019թ 10 ամիսներին, համաձայն «ԷԿԵՆԳ» հրապարակած տվյալների, պետական պաշտոնյաները գործուղելիս նախապատվությունը տվել են շրջագայել դեպի Ռուսաստանի Դաշնություն, Բելառուս, Շվեյցարիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Բելգիա և այլն: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գերակա ուղղություններն էին՝ Ղազախստանը, ՌԴ, Ֆրանսիա, ԱՄՆ, Գերմանիա և այլն: Ի տարբերություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2019թ-ին դեպի Բելառուս գործուղումների տևողությունն աճել է 5 անգամ, դեպի Շվեյցարիա՝ 2 անգամ, Ռուսաստան՝ 28%-ով, և նվազել է դեպի Ղազախստան՝ 6 անգամ, Ֆրանսիա՝ 2 անգամ և Գերմանիա՝ գրեթե 2 անգամ:

Աղյուսակ 4. Գործուղումների խոշոր ուղղությունները 2018-2019թ 10 ամիսներ /օրեր/

| *Երկիր* | **2018թ** | **2019թ** | **Տարբերությունը** |
|---|---|---|---|
| *ՌԴ* | 142 | 182 | 40 ↑ |
| *Բելառուս* | 29 | 153 | 124 ↑ |
| *Շվեյցարիա* | 37 | 67 | 30 ↑ |
| *ԱՄՆ* | 64 | 61 | 3 ↓ |
| *Բելգիա* | 40 | 59 | 19 ↑ |
| *Վրաստան* | 34 | 52 | 18 ↑ |
| *Ֆրանսիա* | 81 | 49 | 32 ↓ |
| *Իտալիա* | 32 | 45 | 13 ↑ |
| *Գերմանիա* | 53 | 35 | 18 ↓ |
| *Ղազախստան* | 178 | 29 | 149 ↓ |
| *Ավստրիա* | 52 | 15 | 37 ↓ |
| *Չինաստան* | 35 | 20 | 15 ↓ |

# Ամփոփում

Ուսումնասիրելով նոր իշխանությունների վարքագիծը պաշտոնավարման սկզբի շրջանում և մեկ տարի անց, դուրս ենք բերել որոշակի միտումներ: 2019թ 9 ամիսների ընթացքում պետական գործուղումներին հատկացվել է 700 միլիոն դրամ ավել նախորդ տարվա համեմատ, այինքն՝ 3.4 միլիոն դրամ: 2019 թվականի 10 ամիսներին ծառայողական գործուղումների և շրջագայությունների թվաքանակը նույնպես ավելացել է, ինչը նպաստել է ավիատոմսերին հատկացված ծախսի աճին: Գործուղման միջին տևողությունը գրեթե չի փոփոխվել և կազմում է 4 օր: Այնուամենայնիվ, մեկ ավիատոմսի միջին գինը նվազել է 10 հազար դրամով և կազմում է 210 հազար դրամ:

Ի տարբերություն 2018թ 10 ամիսների գործուղումներին, կառույցների ցանկը գրեթե փոփոխություն չի կրել: Թե՛ նախկինում, թե՛ այժմ ամենախոշոր գործուղող մարմինն է Պաշտպանության նախարարությունը, որը 2019թ 10 ամիսներին ձեռք է բերել 1350 ավիատոմս, ինչի համար ծախսվել է 166 միլիոն դրամ գումար: Վարչապետի աշխատակազմը և նախագահի աշխատակազմը կրկնապատկել են գնված ավիատոմսերի թե՛ քանակը, թե՛ գումարը՝ 2019թ 10 ամիսներին ձեռք բերելով համապատասխանաբար 166 ավիատոմս, ընդամենը 42 միլիոն դրամ արժողությամբ և 113 ավիատոմս, ընդամենը 36 միլիոն դրամ արժողությամբ:

2019թ 10 ամսվա հիմնական գործուղման ուղղություններն են ԱՊՀ երկրները (այդ թվում՝ Ռուսաստան, Բելառուս), Եվրամիության անդամ պետություններ (այդ թվում՝ Բելգիա, Ֆրանսիա, Իտալիա), ինչպես նաև Շվեյցարիա, ԱՄՆ, Վրաստան և այլն: